



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ա. Բ. — ՇՐՋԱՆ ԺՁ. 1883 ՏԱՐԻ ԺՁ. ՅՈՒՆՎ. ԵՒ ՓԵՏՐ.

ՄԵՂԱՒՈՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ.

Թի գառարկ, մարդ խաբէյա համար հնարած յիմար միտք, անխելք կարծիք չէ, որ ոչ մի բանից մի հասկացողութիւն՝ մի տեղեկութիւն չունեցող՝ անմիտ մի մարդի գլխից, խելքից է դուրս եկիլ. մարդիս սիրտն ինքն բարձր ծայրով ասումէ, ինչ որ բաւ զգումէ, թէ մեր մի անյայտի բանի համար ենք ստեղծուել, այնպիսի մի նպատակի համար ծնել, այս աշխարհս եկիլ, որ իւր գերագոյն նշանակութիւնովն, որ ունի մեզ համար, մեր երկրաւոր կեանքի կատարելութիւնն է. մեր ժամանակաւոր գոյութեանն, որ ունինք այս աշխարհումս, թաղն ու պատկն է: Այն ինչ որ ասումէ մեր ներքին ծայրն, մեր հոգին մեզ չի խաբիլ իւր աներկմիտ յուսովն, որ ունի:

50P

ՇԵՆԷՐ.



Աստուած մոռացած, կամ ուրացած մարդը լինի է տալիս այն ուրախութիւնների մէջն, որ՝ իրանից չարաչար խաբուած՝ անբաղդացածների ախ ու վախի գնովն է ձեռք բերել ու ունի. նա ծաղր է անում անմեղին. առաքինութիւնը, անխելքութիւն է, յիմար՝ ոչինչ բան է, ասումէ. կրօնը՝ հաւատը՝ յիմար, կոյր ժողովրդի համար մի սանձ է, մի կապ է նոցա բերանին, վիզին, գլխին քցած ու կապած՝ որ նորան՝ բռնած, տանեն ու բերեն, որտեղ ուզեն եւ ինչպէս որ ուզեն նորանք, որոնց ձեռքն է այդ կապը, այդ սանձը: Աստուածը մոռացած, կամ ուրացած մարդը՝ իւր փառքի ու պատուի մէջը՝ բարձրից իւր աչքը չորս կողմն

է ձգում, հոգարտ հոգարտ մտիկ տալիս ամեն կողմն ու հարցա-
նում. մէքէ Աստուծոյ հայ:

Ամենին քանդող ու իրան շինող, ամենին վեառող ու իրան
շահը միայն մտիկ տուող, ամենին մուր քողոյ սեւաշնող, յան-
ցաւոր, պակասաւոր հանող ու իրան մարտի, արդարացոյ տուող,
անիրաւ բան չանող ձեւաշնողն իւր սեւ հոգւովն իւր գաղանա-
կան անխոյժութիւնովն ուրախանումէ իւր մէջն՝ իւր արած այդ
ամեն չարագործութիւնների վերայ, որոնց մէջ իւր մեծ խելքն
է տեսնում, որ միշտ լաւ է բանեցնում. ամենեւին մարիցն եւս
է անց կացնում թէ՛ գայի նման՝ այս՝ այն անմեղ գառի արխնն
մտնում ու նորանց պատառ պատառ անում: Նորա խղճմը-
անքն այնչափ քարացած է, նորա ամօթն՝ երեսիցն այնչափ
սրբուած, գնացած է, որ նա ոչ վախենումէ եւ ոչ ամաչում՝ ար-
դար, ճշմարիտ մարդի իւր վերայ շատ վատ աչքով մտիկ տա-
լուցն. նա այնչափ խորամանկ է, որ իւր նման չար ու վատ մար-
դոցից անց է ու նորանց ճանկը չէ բնկնում. նա շատ սատանայ
է ու ամեն սատանութիւն բանեցնումէ, որ՝ լեզուով չպատմուե-
լու՝ եւ ամեն մարդի զըռանքի ու չափից դուրս անարգանքի
արժանի իւր արարմունքին, իւր ամենաստոր, ամենապարսաւե-
լի գործերին մի պառչածաւոր, մի ընդունելի՝ ու ժամանակի լաւ
սովորութեանց ու հոգւոյն համեմատ մի կերպարանք յայ, ու
շատ մարդ խաբուի ու միայն լաւ կողմից տեսնի ու հասկանայ
իւր արած ամեն գործերն, որոնց համար քանի՛ քանի՛ անգամ
կախ տալու արժանի էր ու՝ սատկելուց յետոյ՝ յաւիտենական
նղովքի ու սարսափելի անէծքների տակը մնալու: Նա աւագամ
նա այնպիսի մի մարդ է երեւում ուրիշների աչքին, որ ամենն
եւս ասումեն թէ՛ շատ նախանձելի մարդ է, ինչի որ կոյր բազ-
դը միայն նորան է գնացել, գտել, ամեն կողմից ամենից բազ-
դաւոր է. ամենայն բանի տէր է, ամեն բանն ունի ու վայելումէ,
թէ՛ փառք, թէ՛ պատիւ, թէ՛ անուշ, թէ՛ իշխանութիւն. ինչ եւս
որ սիրան սղենայ, կուենայ, ինչ որ ուղենայ, կանի. մի բան
չկայ, որ նա ուղենայ՝ ու չհամարի ցանկութիւնին. նորան մնումէ
միայն միշտ լող տալ աշխարհիս վայելչութիւնների մէջն. նորան
ոչ որ կաշել չէ կարող, ոչ որ աչքիդ վրայ ունք կայ տակ չհա-
համարձակիլ, նորանից ամեն մարդ վախենումէ, նորանից ամեն
մարդ հեռու է վախչում իբրեւ մի թռնաւոր օձից, իբրեւ մի

չար գաղանից. նորան ամեն մարդ պիտի հնազանդի, կամքովը գնայ, կամ իրան գոնէ հեռու պահի, բայց լեզուն փորը քցած, եթէ չէ կարող անասօթաբարձորա չարագործութիւններն իրրեւ մի մի աւարկնութիւններ քարոզել ամեն տեղ. իսկ եթէ մինը համարձակուի սեւին՝ սեւ ասել՝ եւ ոչ թէ սեւին՝ ճերմակի, կամ ճերմակին՝ սեւ, ինչ որ՝ ինչպէս որ եւ երբ որ նա՝ իրրեւ միշտ չարք գործող՝ միշտ կամենումէ ու սիրում, այն ժամանակ այլ եւս չպրծնիլ ձեռքիցն. սարգի (գործարարի) պէս կքցի, կսարքի իւր ոտտայնն ու այնպէս կրերի բանն իւր լարած սատանայական մեքենայութիւններովն, որ արդար ու պատուաւոր մարդն այնպէս կլիտանգուի ինչպէս որ ճանճը, միամտաբար թռչելու ժամանակն, գնումէ ու գործարարի (մամուկ, բով) սարքած բունի մէջն ընկնում, որից ազատուելու, գուրս պրծնելու համար արած ամեն մի փորձն, ամեն մի շարժումը, նորա սարքած թելերի մէջն աւելի եւս ս'ատփաթաթուելու, կապկպուելու պատճառ է դառնում, մինչեւ որ քաշած աշխատութիւններիցն ու չարչարուելուցը թուլացած ու ազատուելու յոյսը կարած՝ մնումէ, ու գործարարը գալի նորա մարմնին մօտենում՝ ու մի մի խայթոցներ տալով, ինչպէս որ ինքը կուզի, այնպէս լաւ փաթաթումէ նորան իւր սարքած թելերի մէջն, ու այնուհետեւ բոլորովին ապահովացած, որ իւր որսն է, էլ ձեռքիցը գուրս գալ չէ կարող, սկսումէ հանգիստ կերպով նորա արխնը ծծել, մինչեւ որ արիւնշաքամ, սատկած թողնումէ:

Նա լոյ է տալի աշխարհիս վայելչութիւնների, ուշատ բարութիւնների մէջն, որ անարժան ճանապարհներով եկել, հասել է մինչեւ այդ տեղերը ու իրան քցել է նորանց մէջն, ինչպէս մըշտական մի ընթացք ունեցող մեծ ջուրի մէջն. լոյ է տալի ու լոյ է տալի մէջն, որքան որ սիրան կուզի, ու զովանում, զուարճանում, զուարթանումէ. թէ որչափ մարդոց արխնն է թափել կամ մտել, որ այդ ջուրը գոյացրել է ու մէջը լոյ է տալիս, նորան՝ իւր չունեցած, իւր՝ վաղուց մեռած խղճմտանքն ոչ միայն չէ տանջում, այլ ընդհակառակն շատ ուրախանումէ իւր ունեցած մեծ խելքի վերայ, իւր բանեցրած հնարների վերայ, իւր սարքած որոգայթների վերայ, որոց մէջ ձգեց, ու որ ձեռքն ընկաւ. խելք ունենային, զգոյշ մնային, իւր ճանկը չընկնէին, իրանց պատուից, անունից, ունեցած՝ չունեցածից ու իրանց

կեանքից չէին զրկուել: Այսպէս նա յոյ է տալիս իւր չարագործութիւնները՝ քանի գնում՝ աւելացնում, շատացնում, մեծացնում, ունեցած յաջողութիւններից կուտացած եւ աւելի աչքածակուած ու գազանացած, կատաղած. նորա համար անպարտ մեղք անենլ սորան՝ նորան՝ նշանակութիւն չունի. նա՝ մեղք, վատ գործ ասած բանգ չէ ընդունում, նորա համար չկայ մեղք, վատ գործ, ամօթ, պատիւ, անուն. այլ նորա համար կայ միայն փող, ու ամեն մեղք ու վատ գործ՝ վարչական խելք է, նա՝ ախարհիս մէջ խելք բանեցնելով է ապրել միշտ: Նորա միակ առաքինութիւնն՝ իւր խորամանկութիւնն, իւր նենգամտութիւնն, իւր անխիղճ եւ անամօթ խարդախութիւնն ու խաբեբայութիւնն է. նորա սրտի միակ բարութիւնը՝ իւր լաւ ապրելն է. իւր միակ արժանաւորութիւնն՝ հարստութիւն գիլելն: Նոր նոր բարիքների, փողերի, կալուածների տէր է դառնում, որ կարծես, իրանք իրանց գալիս են ու ձեռքն ընկնում. ու ինչ բանի մէջ եւս որ մանի, ինչ բանի եւս որ կոչի, գործն յաջողումէ. կարծես թէ Նրկինքն եւս նորա կողմն է, նորա համար է ջանք անում, որ չար, վատ մարդը ամեն բանով լցուած լինի ի վերուստէն այնպիսի ժի մարդի նման, որ Աստուծոյ ամենայն օրհնութեանն, ամենայն տեսակ պարգեւներին արժանացած է: Վարդիկ չըջապատումեն նորա չորս կողմը, կանգնած են պատուով ու մեծաբանքով. այդ կերպով են մօտենում նորան, ով որ մօտենումէ, այն եւս, եթէ մարդատեղ զնի, եթէ արժան համարի ընդունել, իւր երեսը հանել: Զարմացած, հիացած, ապշած մնացել եմ, տեսնելով թէ ինչպէս չարագործութիւնը, աչք ծակող սրակասութիւնները, աններելի յանցանքը՝ Աստուծոյ կատարելութիւնների տեղն ու նման պաշտօնումեն. իսկ առաքինութիւնը ծաղր եղած, անարգուած, ստնակոխ է՝ մի չարագործութիւնի մի անտանելի յանցանքի նման: Սա ի՞նչ բան է. այսպիսի էլ բան կլինի. մի թէ քնած է Հասուցանողն, որ չար գործն ու գործողը անպատիժ են. մի թէ աստղերից վերելումն Պատաւոր չկայ. այս աշխարհս չարագործների, յանցաւորների գրանխան է, ի՞նչ է. դժոխքն արգանք մարդոցն է ու նորանց տեղն է:

Նա լո՞ղ է տալի. եւ իւր՝ թէեւ զղուելի եւ անարգ, բայց յաջողութիւն գտած՝ չար գործերի, վատ մեղքերի մէջը՝ մաղերը վերջապէս ճերմակումեն, ծերութիւնը գալիս է վրան հաս-

նում, ուժից ընկնումէ, ցաւերի տիրանում. մի՛ երբեմն խեղճի
 ձեռքը խեղճանում, նորա բուռը մանում, մահուան ժամը (սա-
 հաթը) խփումէ, մեռնումէ անդիպ, ինչպէս որ անխիղճ ապրել
 էր: Աչքը փակումէ աշխարհին՝ քաղցր քունի գնալու նման,
 քաղցր քուն մտնելու պէս՝ իւր փափուկ տեղաշարերի մէջը՝ կա-
 կուղ բարձի վրայ գլուխը դրած, հանգստացած, մի արդար
 մարդի նման: Նքեղ, փառաւոր հանդէսներ եւ կատարւում նո-
 րա դագաղի վերայ, նորա դին, անշնչացած մարմինն՝ ինչ երգե-
 րով, ինչ բաղմունքիւնով եկեղեցականների ու աշխարհականների
 տանումեն, գերեզման դնում եւ՝ ժամանակին՝ վրան մօռմառ-
 եայ արձաններ կանգնում: Քէեւ թաղման փառաւոր հանդիսի
 ժամանակն արգէն՝ պարզ եւ համարձակ շատ՝ շատ մարդի ա-
 կանջին ընկնելու չափ՝ բարձր ձայնով խօսումէ ամեն մի ճշմար-
 տութիւն սիրող բերան. թէեւ գալիս թափւումեն անէծքները
 մեռնողի մարմառ սիւնների վերայ. թէեւ նորանից յետոյ ապ-
 րողների մտքում նորա յիշատակը այնչափ արժէք ունի, որչափ
 գին ունի այն մարդի արժէքն, որ ձեռք ձգող մի ազքատի գրու-
 թեանն է հասած. կարծես, այդ մեռնողն եւս՝ ողորմութիւն ա-
 րէք, ողորմեցէք ինձ ասումէ, ու իմ՝ վրայ մի խօսէք, որովհե-
 տեւ այժմ՝ ամեն իմ գործերս բաց են մի գրքի նման ու գրուած
 է ձեր առաջին. էլ սուտ ու խարդախութիւն չէ կարելի բանի տեղ
 անց կենայ. բայց վատ մի խօսէք իմ մասին, այլ լաւն, եթէ որ
 լաւ, բարի գործի պատրուակն եւս միայն ունենայ. շատ վատ
 բան արել եմ, այժմ՝ խոստովանւումեմ, ինձ ամենից խելօք
 կարծելով, իսկ ինձանից ջոկ՝ ամենին բոլորովին անխելք համա-
 րելով, հող եմ փչած՝ այն, մարդոց աչքին, ու չարագործու-
 թիւններս, աններելի, զղուելի գործերս՝ բարեգործութեան, ազ-
 գասիրութեան, աստուածսիրութեան, բարեպաշտութեան վա-
 րագուրով՝ իրրեւ հաստ վերմակով, ոչ թէ թափանցիկ քօղով
 եմ ծածկել՝ որ ամեն միամիտ, պարզամիտ մարդն եւս տեսնել
 հասկանալ՝ ու ինձ իմ գործքիս հետը ճանաչել կարողանայ: Բայց
 այժմ՝ մեղքերս խոստովանւում եմ, որ արգէն բաց եմ մերկա-
 պարանոց եմ՝ ժամանակի պահանջմանն ենթարկուելով. դուք
 ձեր կողմէն մեծահոգի, ներողամիտ, աղնուասիրա եղիք, եւ ինչ
 յատկութիւններ, որ ես չունէի, դուք ունեցէք եւ այդ ձեր աղ-
 նիւ յատկութիւններովն իմ ունեցած ամեն ստոր յատկութիւն-

ներքո ծածկեցէք՝ իրրեւ թէ արդար եւ ոչ բազմամեղ նոր Նոյիս մերկութեանը վերայ ինչի որ՝ գէ՛ ես ձեր նաճապետն եմ՝ միտնեիք բերում՝ իրրեւ յիշատակը մի նաճապետի, որ՝ իրրեւ թէ իրաւացի եւ ըստ ամենայնի արդար՝ ու անմահանալու ձեզ տուածներով է ապրել, ձգտումներով՝ որ իւր ամենայն չարագործութիւններն՝ իրան միայն մեծ իմաստուն կարծելովն՝ սխալմամբ, իրանից ջուկ յիմարներին՝ սեւը սպիտակի տեղ՝ իրրեւ հալած իւզ կուլ տալ տալ ամենայն հեշտութեամբ կարող է այլեւայլ՝ կարծեցեալ համոզող առաքինութեան երեւոյթ ունեցող, բայց փառասիրութեան, շահասիրութեան ու՝ մարդ ջուրի քշող՝ բարոյական խռնոր պակասաւոր բնաւորութիւնովն: Ի՛նչ էլ ասի, արածն արեց. բայց մահը նորա աչքը փակեց. բաղդաւոր չարագործն այլ եւս չէ տեսնում՝ բոլոր աշխարհի զգուանքն իրանից. մահը նորա տկանը խլաղրել, փակել է, ճշմարիտ խօսքերի սարսափելի մեղադրանքներն չեն ձայն տալի նորա գերեզմանի խոր տեղումը. մարգոյ անէծքներից գլուխն առաւ, կորաւ, գնաց նա. էլ ահանջը բան չէ թոււմ:

Չտարակուսիմ՝, չկասկածեմ՝, չյուսահատուիմ՝ ես Աստուծոյ Նախախնամութեանն ու աշխարհիս կարգի վերայ, որ առաքինութեան է միայն յաղթութեան ու յաղթանակի պատկն խոստացել, ու տեսնումեմ՝ որ լիբը ու խորամանկ չարագործութիւնն ու մոլութիւնն է այն սլակովն պսակւում, զարդարում իւր գլուխը:

Աւելիքն ասումեմ՝ առանց ծածկելու, ինչ որ իմ մէջն անց է կենում. շատ ու շատ անգամ սիրտս ճաքումէ, յուսահատումեմ, տեսնելով այս՝ այն մարդի վիճակը, դրութիւնը, կեանքն ու մահը, որ ամենեւին համապատասխան չեն երեւում իրանց ունեցած առաքինութիւններին ու մոլութիւններին, կամ չար գործքին. իրանց արարմունքի ու գործքի հատուցումն կարծես չեն ստանում: Բայց եւ այնպէս հաւատումեմ, որ կայ առաքինութիւն, որ վարձատրւումէ երկնքից, ու մի անփախչելի պատիժ, կործանումն, կորուստ, որ չարագործի քամակից անբաժան ման է գալի, մարդի ետեւից ընկնող թռնաւոր օձի նման, որ սլախի անպաճառ խայթի նորա գարշապարը (ոտի կրունկը), ու չարագործի տէր մարդն անկարելի է, որ իւր գլուխն ազատել կարողանայ, իւր արժանաւոր պատիժը չտանայ. երբ եւ

իցէ՛. անպատճառ պէտք է կործանուի, կորչի, ինչպէս տաճ
է՛ չարը չարոյ կ'կործանուի:

Մտիկ տուէ՛ք այնտեղ այն անամօթ անպատկառ մարդին, որ
ամօթը գէն դրած, ճակատը բաց մարդի նման, ինքն իրան սուտ
այնպէս է ցոյց տալիս իրրեւ թէ մի պատուական, խղճմտանքով,
որո՞՞ւմը գութ ունեցող մարդ է, խեղճերին, անտէրներին տէ-
րութիւն անող. ու տեսնումես, որ այրիների ու որբերի սուրբ
եւ անձեռնմխելի (ձեռք չկայցնելու) համարուած սեպհականու-
թիւնը տակով է անում. մի մտիկ տուէ՛ք նորան, ինչպէս ստա-
ցուածք ստացուածքի վրայ է հաւաքում, գիղում ու իւր հա-
մար մի լաւ, մի հանգիստ, ամեն կողմանէ լի անպակաս մի ապ-
րուստ պատրաստում, որ անկարօտ, լի եւ առատ կերպով ապ-
րի, ինչպէս որ սիրտը կուզի. ու այնպէս լիութեան մէջ ապ-
րումէ ու իւր բոլոր կեանքն լաւ անց կացնում մինչեւ իւր
մահն, որ կործեն թէ՛ իւր ամենազնիւ առաքինութիւնների ար-
դիւնքն (բերած շահը) է, որ վայելումէր ու վայելեց, ոչ թէ
ոգորմելի որբերին եւ այրիներին չոր գետնի վերայ նստացնե-
ով, նորանց հացը բերաններից խլելով ու ամեն կողմից դառն աշխա-
տութեան մէջ ձգելովն էր, որ ունէր, ինչ որ ունէր ու վայելումէր:
Սուտ չէ, որ անտճ է թէ՛ անիրաւութիւնով ձեռք բերածը (ու-
նեցածը) չի մնալ. ինչպէս որ եկել է, այնպէս եւս կգնայ, կփչա-
նայ. բայց մի ժամանակ այնպէս լաւ է մնում, ու չէ փչա-
նում՝ որ լաւ հարստութիւն է դառնում. ունեցողն թէ ինքն
եւ լաւ վայելումէ եւ գեռ աւերացնում, առաջաւոր մարդ, հա-
րուստ՝ պատուաւոր տուն դառնում, եւ թէ իւր զաւակներին է
թողնում՝ թէ՛ հարստութիւնն եւ թէ մի անուն, որ շատերի բե-
րանումն է թէ՛ ինչ էին, ինչ չէին, բայց այժմ՝ հարուստ առա-
ջաւոր, անուանի տուն դարձան, նորանց հետ սօլ կարող է ոտ
ձգել: Աործես թէ՛ այն մարդը միայն անյաճողութեան մէջ պիտի
լինի, առաջ պիտի չգնայ, ով որ չար գործքի տէր մարդի ոչ խո-
րամանգութիւնն ու խարդախութիւնն ունի, ոչ էլ նորա վատ
պակասութիւններն ու յանցանքները. այդպիսի մարդի համար
եւս ասումն թէ՛ միամիտ՝ պարզ մարդ է. ձեռքից բան չէ գա-
լիս, նորա համար խեղճ դրութեան մէջն է եւ այնպէս եւս կմնայ.
այժմ՝ աշխարհս ուղիղ, հաւատարիմ, արդար, միամիտ մարդի
աշխարհ չէ, այն տարիներն անց կացան. այժմ՝ ասումն, աշ-

խորհո՞ւմ դմակ է՝ դու դանակ- որքան կուզես, կտրիր, վեր առ- քեզ՝ աչքդ չորս պիտի անես, որ, եւ ապրես եւ փողի տէր դառ- նաս. եթէ միամտութիւնովդ մնաս, ունեցածդ եւս ձեռքիցդ կգնայ, գործիցդ աշխատանք չես ունենայ, ձեռքդ ծոցումդ կը- մնաս: Նստ անգամ եւս պատահումէ՝ որ մինի գործի վատ հե- տեւանք ունենալը, ձախ գնալ, վատ դուրս գալը, կամ երեւե- լը՝ ոչ թէ վատ գործ տնելուցն է, այլ մի անդգուշութիւնից, որ երկար ու շատ չմտածելուցն ու միամտութեամբ բան բռնե- լուցն է:

Ի՞նչպէս բոլորովին ուրիշ կերպ է մեր աչքի առաջին երեւումը իւր պատիւը ճանաչող մարդը: Նա աւելորդ ծախք անել չէ սի- րում որպէս եւ անգործ, պարտաւ մնալ. բայց եւ այնպէս նա շատ անգամ չունեւորի կարգումն է եւ պատիւը քիչ է: Նորան օգնող, հասնող չկայ, ինչի որ նա ուրիշներէ իրան արած օգնու- թիւնի տեղ ինքն եւս ուրիշին մի օգնութիւն անել, մի կերպով նորան հասնել, նորա մի բանին գտնուել չէ կարում, որ իրան ստացած լաւութիւնի տեղը դուրս բերի, պարտական չմնայ ու չլսի այն խօսքը թէ՛ ես նորան այս բանն արի, հասայ, նա՛ ինձ ի՞նչ արեց, մի բանիս հասա՞ւ, օգնե՞ց, գտնուե՞ց: Մարդոց ան- բաղտութիւնիցը՝ մինը միւսին մեղկանալը, մին՝ մինի օգնելը, մին մինի հասնելը, Աստուծոյ համար չէ, այլ հացի փոխ է, ինչ- պէս ասումեն, խորամանկութիւնով, հաշուով, հեռատեսու- թիւնով արած մի գործ է, ժամանակին իւր համար երեսատեղ ունենալու համար է, արած գործի միջիցն ինքն է դուրս գալի ու իւր շահն՝ ժամանակին, ոչ թէ իւր նման մարդին վարձք տ- նել է. ուրեմն ուր որ յուսատեղ կարող է ունենալ, որ մի օր եւս այն մարդը իւր պարտքի տակից կարող է դուրս գալ, որին որ սյգժմ հասնումէ, լաւութիւն է անում, այն է օր կանխ. իսկ եթէ չէ՛ եթէ յոյս չունի մի օր նորանից մի օգուտ, շահ ունե- նալու, սիրտը կքարացնի ու բոլորովին հեռու կպահի իրանից այն մարդին, որ իրան է ընկել, աղաչանք, պաղատանք է անում թէ՛ իմ նեղ օրիս հասի՞ր, ինձ ազատի՞ր:

Բայց ինչի՞ համար առաքինութիւնը իւր արժանաւոր գինը, տեղը, նշանակութիւնը պիտի չունենայ. ինչի՞ համար բանի տեղ անգամ պիտի անց չկենայ իբրեւ թէ մի հարկաւոր, մի պէտ- քական բան չէ: Ինչի՞ համար ճշմարիտ մարդը, խղճմաւոր ու-

Նեղոյ ու ծուռութիւն սիրտը վեր չառնող մարդը շատ ու շատ անգամ նեղութիւնի մէջ պէտքէ տապալիւնի, ազատուելու ամեն դուռները, կարծես, նորա առաջին փակուած պիտի լինին, ինչպէս մի մեղապարտի համար, որ իւր բանտի նեղ ու մութ պատերից դուրս գալու, պրծնելու ոչ մի հնարք պիտի չունենայ: Ենչի՞ համար մինին՝ իւր վայր ընկած տեղից չպիտի վեր կացնեն, ոտի կանգնացնեն՝ առանց մտիկ տալու թէ հօրենական ինչ ունի, ինքն ինչի տէր է: Ենչի՞ համար՝ այս աշխարհիս երեսին՝ առաքինի մարդն այն տեղը պիտի հասնի մի մի անգամ, որ ուրախ լինի աղքատ՝ վիրաւոր Ղազարոսի նման, եթէ որ մի հարուստի դրան վայր ընկած լինի ու նորա շուայութիւնով պատրաստուած սեղանիցը ցած թափած փշրանքները հաւաքի իւր փորը կշտացնելու համար:

Առաքինի մարդն իւր քաշած մեծ նեղութիւնների, իւր ունեցած ձախորդութիւնների մէջ կարողանումէ զօրաւոր կերպով մխիթարուիլ իւր սուրբ եւ կենդանի հաւատի զօրութիւնովն, որ նորան զօրութիւն եւ ոյժ է տալի անցաւոր աշխարհիս յաջողութիւնի ու ձախորդութիւնի, հարստութիւնի ու աղքատութիւնի, նեղութիւնի ու լէնութիւնի վերայ ուրիշ աչքով մտիկ տալու եւ ամենեւին ինքն իրան չկորցնելու, չյուսահատուելու, եւ կարճւմ է նա իւր սիրտը հանգստացնելու թէ՛ աշխարհիս ամեն բանի իսկն ինչ է, այն միտք անելով՝ որ ամեն բան ժամանակաւոր է, այսօր կայ, վաղը՝ չկայ, բոլորն եւս անց է կենում, գրեւոր մարդոց հետ միասին, որ երբ որ գնումեն հողի տակը պառկում, նորանց ոչ հարուստն է երեւում, ոչ աղքատը, ոչ մեծ աստիճանաւորն ու պորտապորտ աղնուականը, ոչ հասարակ մարդը, ոչ թագաւորը, ոչ էլ խեղճ ու չարչարանքով ապրած գեղացին: Մտածումէ, որ մեր այսօրվայ կերածը, խմածը, հագածը, վայելցութիւնները, փողը, մեծութիւնը, իշխանութիւնը, պատիւը՝ մեր աչքին բան չէ երեւում, էլի անկուշտ է մարդս, էլի կարծես, շատ բաներ պակաս են նորան, որոց համար շատ անգամ միտք է անում ու ցանկութիւններին չհասնելուն համար սիրտն այրվում. նորա համար՝ այս կեանքի հանգամանքների համար հոգս անող ու իւր հաւատովն ինքն իրան մխիթարել ու զօրացնել չկարողացողն որպէս եւ աշխարհիս բարեքներից չկշտացողն յիշուէ անբաղտ է: Բայց այսպէս չէ մտա-

ծուժ բազմաւոր յանցաւորը, տուն քանդողը, գրպաններ դատարկողն, արիւն ծծողը, ամեն խորամանկութիւնի, խարդախութիւնի, խաբէբայութիւնի գնով առաջացած ու յաւ կեանք անցկացնող չար հոգին. նա ժպտումէ, նորա երեսին ծիծաղ է բերում այդ տեսակ մտածմունքից յառաջ եկած քրիստոնէական մխիթարութիւնը. նա ասումէ ինքն իրան. այսպիսի մխիթարութիւններն ինձ հարկաւոր չեն, կարօտ չեմ:

Արտեղ հասայ ես. այս ի՞նչ եմ անում, ինչե՞ր եմ միտք անում: Այս որպիսի փորձանքներ են, որոց մէջն ընկնում եմ. ինչպէս կոտորվումէ սիրտս, որ միտք եմ անում թէ՛ ի՞նչպէս հաստատ մնամ ես բարի ճանապարհի վերայ, միշտ բարիին հետեւի՞մ ու չար բանիցն ինձ հեռու պահեմ: Ի՞նչպէս փորձանքի մէջ եմ ընկնում իմ ունեցած հաստատ հաւատովս, որ իմ մէջս սկսումէ թուլանալ ու սկսում եմ կորցնել ինձ իմ մտածմունքներին մէջն թէ՛ Աստուծոյ խնամք կայ աշխարհիս ու մարդոյ վերայ, կամ առաքինութիւն (բարի զգացմունք, բարի միտք, բարի գործ), կայ ու մինչանակութիւն, կամ գին ունի՞ր թէ՛ չէ: Ի՞նչպէս մին մինի հակառակ բաներ եմ տեսնում ես. այս ի՞նչ բան է, որ իմ ունեցած սուրբ համոզմունքիս հետ մէկ չեն գալիս կեանքիս մէջ տեսածներս, որ փորձում եմ ու տեսնում որ ջոկ ջոկ բաներ են ու մին մինի հակառակ:

Մի թէ նորա համար ենք միայն աշխարհք եկել, որ վատ մարդի, չար գործքի տէր ու վնասակար մարդի ունեցած մեծ յաջողութիւնների, կանգնած յողթանակի վերայ զարմացած, ապշած մնանք. ու ազնիւ մարդի վերայ մտիկ տալով սաստիկ ցաւինք, մեղքով լցունք ու տեսնենք, որ՝ նա իւր բռնած ճշմարիտ՝ ուղիղ ճանապարհովն ու արդար գործ տեսնելովը՝ դուռնից դուռն ման գալու եւ ողորմութիւն հաւաքելու օրին է հասնում. որ տեսնենք թէ՛ նորա ամբիժ կեանք ունենալուն վերայ ծիծաղում են շատ ու շատ անբարոյական, անպիտան մարդիկն ու նորան տնայլ անում. որ տեսնենք նորան՝ իւր Աստուծոյն հայրենիքին եւ ազգին հաւատարիմ ծառայութիւնին համար՝ աքսոր են քշում. որ տեսնենք թէ՛ իւր՝ ճշմարիտը սիրող, ճշմարիտ բանի հետեւող լինելուն համար՝ քարշաքարշ բանտն են տանում, քցում:

Առաջուան աշխարհի պատմութիւնն եւս նոյնը արդեօք չէ ցոյց տալի մեզ, ուղղումեմ ասել, նոյն բաները չէ՞ ցոյց տալի արդեօք, որ պատահել են ու պէտք չէր պատահէին. նոյն՝ սիրտ կոտորող՝ շատ ու շատ օրինակները չէ՞նք կարդում արդեօք Հին ժամանակներն ապրած մարդոց մասին, ինչ որ տեսնումենք մեր օրերումն՝ մեր ժամանակի մարդոց վերայ, որ վատ գործքի տէր մարդոց օրերն լաւ են անց կենում, իսկ լաւ մարդոց կեանքը շատ դժուար է լինում իրանց համար:

Ուղղումեմ առաքինութիւնն ու չարագործութիւնը մի լաւ խելքիս տակը ձգեմ ու հասկանամ թէ՛ ինչ նպատակ, ինչ վերջ ունեն ու Փրկչիս տուած բացատրութիւններովն ես մի դուրս գալու ճանապարհ կգտնեմ այս բաւիղից. իմ կարծիքներս ու կասկածանքներս, որ ինձ մոլորեցնումեն, Նորա ինձ սորվեցրածներովը կփարատեմ: Անկարելի է, որ ճշմարտութիւնը յաղթուի կամ ոտի տակ գնայ, մնայ, թէեւ շատ ու շատ անգամ ծաղր է լինում չարութիւնին, անարգւում, արհամարհւում. անկարելի է, որ վատութիւնը, ու վատը գործողը միշտ յաղթող գտնուի, թէեւ սկզբից մինչեւ վերջը մեզ այնպէս է երեւում, որ յաջողումէ ու բազմ ունի: Անկարելի բան է, ասումեմ, որ այսպէս լինի աշխարհիս բանն, եթէ ոչ՝ ամենայն իմաստութիւն՝ խելագարութիւն պիտի համարուէր. ամենայն կրօն՝ հաւատ՝ մոլորութիւն, սխալ բան, եւ ամենարգար բանն, որ Քրիստոս մեզ յայտնեց, անարգար ու ծո՛ւռ:

Փրկչի ասածովն՝ առաքինութիւնը մեր հոգւոյ սրբուիլ, մաքրուիլն է մեղքից. մեր մէջն ոյժ ու զօրութիւն աւելանալն է, մեր աւելի զօրանալն է աշխարհիս ամեն բաների վերայ, որ որչափ եւս գրաւիչ լինին, մեզ իրանց գերի անել ամենեւին չկարողանան. դա մի ջանք, մի բժրումն, մի զօրեղ ձգտումն է, որ պայծառացնենք, երկնքի արժանի անենք այն, ինչ որ անմահ է մեր մահկանայու մարմնի մէջը, նման անենք Աստուածութեան, ինչպէս որ Աստուածանիցն է իւր ծագումը:

Ինչպէս որ սերմանացանն իւր ցանելու սերմը հողի մէջն է քցում, որ ծլի, դուրս գայ, ծաղկի, մեծանայ, հասնի, այսպէս եւ Աստուած այս մեր հողից ստեղծուած ու հող դառնալու մարդկային, հոգեղէն մարմնի մէջը քցել է մի սերմ, որ ամենայն կատարելագործութեան ընդունակ է, որ յաւիտենական

գոյութիւն ունենալու եւ ծաղկելու համար է ընտրուած: Մեր հոգին զօրութիւն ունի, կարող է ազատօրէն գործելու, գործ կատարելու, որ միշտ զարգանայ ու յառաջանայ կատարելութեան վիճակի հասնելու համար: Եթէ որ ինքնագլուխ ու ազատ գործունէութիւն չունենայ այս սերմը, որ է մեր հոգին, իւր ցանուած հոգի վերայ փուշերն ու տատառներն, որ լիքն են, իրան կիսեղգեն:

Առհաս, առաւելու-լինի նպատակը, վերջին միտքն է, որ մեր հոգին ինքն իրան կատարելութեան աստիճանին տանի, հասցնի, մեր մարմնի մէջ բնակող անմահ հոգին անթերի ու կատարեալ կերպով զօրանայ, իւր զօրութեան վերջին աստիճանին հասած լինի: Ինչ որ մեր՝ մինչեւ մի ժամանակ միայն աշխարհիս վերայ մնացող՝ մարմնի մէջը կայ, գոյութիւն ու կեանք ունի, յաւիտեանակամ համար է միայն, յաւիտեանակամ կեանք ունենալու համար է ապրում միայն. ինչ որ մեր մարմնի մէջը հոգեւոր է, միայն հոգեւորի համար է ապրում: Սորա համար եւ այս մտքով ասաց Փրկիչն Յիսուս թէ՝ «ձեզ համար գանձեր գիզեցէք երկնքումն, որ ոչ ցեցը եւ ոչ ժանկը ուտի» (ձեզ համար մեծ փող մին մինի վերայ դրէք երկնքումն, ուր ոչ ցեցը կ'փչացնի, ոչ էլ ժանկը կ'ուտի):

Ուրեմն առաքինի եմ՝ ես՝ իմ մէջս բնակող յաւիտենական կեանքիս համար, ոչ թէ հոգ դառնալու, ոչնչանալու մարմնիս համար, որ մահուանս ժամին՝ իբրեւ իմ հնացած հագուստ՝ պիտի հանեմ՝ վրայիցս ու գէն քցեմ: Այսպէս ուրեմն առաքինի եմ ես, որ աւելի զօրաւոր, աւելի սուրբ, աւելի վսեմ մի էութիւն դառնամ՝ դեռ եւս այս երկրաւոր կեանքիս մէջն, իսկ եւս աւելին լինիմ ապագայ, ու աւելի կատարեալ կեանքիս մէջն:

Ինչ որ իմ երկրաւոր բարօրութիւնս առաջացնել է կարող, ինչ որ իմ առաքինի գործերիս ու այդ գործունէութիւնիս շնորհանը պէտք է ընդարձակի, դորա համար պարգեւել է ինձ Աստուած իւրի ոյժ, ինչպէս որ մարմնաւոր, երկրաւոր, աշխարհային կեանքի հարկաւորութեան ու կարիքի համար շատ՝ թէ քիչ պարգեւել է նոյնպէս ամեն՝ մի քիչ բարձր կարգի ու տեսակի կենդանիներին: Բայց այս խելքը՝ միշտ առաքինութեան օրէնքի տակը պիտի լինի. նորա օրէնքին պիտի հնազան-

գի. իսկ մեր հոգին՝ մեր անմահ էութիւնը՝ մեր զգայական մարմնի ցանկութիւնների վերայ այնպիսի բարձր իշխանութիւն ունենայ, ինչպէս որ յաւիտենականն բարձր է անցաւորինցն ու ժամանակաւորինց, ինչպէս որ գերազանց է Աստուածութիւնն հոգեւ փոշի դառնալու բանինց:

Ուրեմն եթէ քրիստոնեան՝ իւր առաքինութիւնովն ոսկի թիթեղի նման երկրաւոր գերազանցութիւնների յետնից չէ ընկնում, էլ ինչի համար էք գանգատում թէ՛ նա այս ու այն պատուի, առտիճանի, սորա՛ նորա նման փողի տէր չէ, երբ որ առանց դորանց եւս կարող է տպրել: Որտեղիցն է ապա երկնքի անարգարութիւնն նորա համար, երբ որ նա՛ իւր Փրկչի նման՝ աշխարհիս մարդոց կարգումը չէ, չէ ճանաչւում, ինչպէս որ պէտք էր ճանաչուէր իւր առաքինութեանն ու արժանաւորութեանցը համեմատ, երբ որ նա անարգ, անպատիւ մարդ է համարուած, աղքատութեան մէջ է, հալածւումէ, մինչեւ անգամ սպանելու են տանում այնպէս, ինչպէս երբեմն անարգ կրից ու անարգական մահուան անպարտ տեղը դատապարտուեց Աստուածայինն Յիսուս: Ինչի որ դուք չարչարանքի անուն էք տալի, չարչարանք քաշել էք ասում, առաքինի մարդի մարմնին միայն հարկաւոր բաները չունենալն է, այդ բաներից զրկուիլն է, այն մարդկային մարմնի, որ իբրեւ ուրիշ՝ օտար նիւթ՝ կարճ ժամանակի համար միայն միաւորուած, ընկերացած է մեր հոգոյն հետը:

Ինչի՞ մէջն է, ի՞նչ բանի վերայ է առաքինութեան յաղթանակը: Արդեօք նորա մէջն՝ նորա վերայ, որ անհաստատ խելքի ու համոզմունքի տէր հասարակ ժողովուրդն այսօր մեզ վերայ գովասանք է խօսում: Արդեօք այն պատիւների՛, առտիճանների, գերազանցութիւնների մէջն է, նորանց վերայ է, որ քաղաքական ընկերութիւնն իւր քաղաքակիցներին, անգամակիցներին տալիս է: Արդեօք այն ոսկիների՞ վերայ, որ մի բանի տարի մերը պիտի լինին այս աշխարհիս վերայ: Զէ, ամենեւին չէ: Մեր հոգին՝ իբրեւ հոգեդէն բնութիւն՝ այս նպատակներից ոչ մինն եւս չէ ճանաչում թէ ինչ են: Ով որ այսպիսի բարիքներին է տուել իւր խելքն ու միտքը, նա յաւիտենականն իւր աչքից փախցրել, կորցրել, ու անմահ արարածների շրջանից դուրս է

եկել ու կենդանիների (անասունների) կարգը մտել, որոնք որ իրանց մարմինն համար են միայն, որ ապրեն:

Ինչի՞ մէջն, ի՞նչի վերայ է առաքինութեան յաղթանակն-
արդեօք նորա մէջն, նորա՞ վերայ, որ այս աշխարհումս ամենայն
մտհիանացու մարդիկ ճանաչեն, գին դնեն, պատուե՞ն:—Չէ՛-
ամենից ստուգածային առաքինութիւնն այն է, որ Աստուածու-
թեան նման ծածուկ է գործում: Նորա յաղթանակն այն նպա-
տակն է, որին հասնելու համար կոչուած է, այս ինքն է՝ այն
ներքին զօրութիւնն է, որ կարողանումէ ունենալ, որով եւ աւե-
լի բարձր երջանկութեան յարմարաւոր եւ ընդունակ կարող է
նա լինել Աստուծոյ արարածների թագաւորութեանը մէջ: Յա-
ւիտենական կեանքը նորա յոյսն է, նորա արմաւենոյ ոստն է՝
էլ ինչ ասեմ. ով որ կարծում է, որ իւր առաքինութիւնն երկ-
րաւոր վարձատրութիւն, երկրաւոր բաղաւորութիւն պիտի
ստանայ, այն մարդն՝ առաքինութիւնն ինչ է, դեռ եւս չէ իմա-
նում, չէ հասկացել. նորա առաքինութիւնն՝ առաքինի լինելու
համար չէր, այլ մի մշակութիւն՝ վարձք ստանալու համար:

Ապա մեղաւորի՞ յաղթանակն օրն է: Չկարծես թէ մի մեծ
յաղթութիւն, մի մեծ յաղթանակ է. այն է նորա բոլոր արած՝
իւր խելքով՝ մեծ գործն, ինչ որ, — եթէ յաղթանակ կարելի է
ասել, ինչ որ անումէ անբան կենդանին, որ հնարք է բանե-
ցնում, դարան մտնում (թագ են կենում, ճանապարհ մտիկ
տալի) եւ՝ իւր երկար համբերելուն համեմատ՝ վերջապէս յաջո-
ղումէ իրան, աշխատանքը զուր չէ անց կենում—, իւր օրսը,
որի ճանապարհն այնչափ երկար ժամանակ մտիկ էր տուել,
արդէն իւր ճանկն է ընկել, բռնել է. էլ ուրիշ բան պէտք չէ նո-
րան, իւր ցանկութիւնին հասել, պրծել է, այնպէս է կարծում
թէ՛ ինչ որ կեանքի մէջ պէտք է՝ այդ է, էլ ուրիշ բան չկայ:

Չարագործն՝ գաղանից ոչ մի բանով պակաս չէ, ու շատ աւե-
լի է այն կողմից, որ իւր հոգոյ ձիրքերն աւելի սարսափելի ու
վտանգաւոր կերպով, աւելի խորամանկութիւնով ու անգութ
կերպով է գործ ածում: Նա միայն «յ» աշխարհի» համար է ապ-
րում: Նորա համար ուրիշ աշխարհք, ուրիշ կեանք չկայ. նա
ուզումէ միայն այս աշխարհիս մէջ նշանակութիւն ունենայ. նո-
րա համար դորանից ազնիւ բան չկայ. նորա ստոր ցանկութիւն-
ները խեղդել, պրծել են նորա մէջ ամենայն՝ իսկապէս աւելի ազ-

նիւ ցանկութիւն, ամենայն՝ իսկապէս աղնիւ բան: Նա իւր մարմնի, իւր անցաւոր փառքի, իւր ստոր ու կարճ օրվան ցանկութիւնների, իւր հաճոյքի, իւր փողասիրութիւնի, իրան գիւրեկան կեղծաւորութիւնների ու կեղծաւորների, իւր հեշտասիրութիւնի, անառակութիւնի գերին է ու դորանց իշխանութեան տակն է բոլորովին: Նա երկրաւոր բանի համար միայն լաւ հրնարագէտ է, լաւ վարպետ է, եւ այդ միայն լաւ գիտէ, ուղղութեմ առել պարզ, լաւ ուտել, խմել, իւր ամեն ուղածն անել ու փող, փող շատ հաւաքել: Այդ տեսակ մարդն ոչ մի առաքինութիւն չունի, այլ միայն մի բաւական վարպետութիւն՝ առաքինի ձեւանալու, որ այդ ցած ու խարդախ խորամանկութիւնովն՝ գաղանի նման դարան մտնի՝ թագ կենայ, ճանապարհ մտիկ տայ, մինչեւ որ իւր ցանկացած որսը ճանկը ձգի, այս ինքն է՝ այդ՝ որսկան գաղանի խելքովը՝ կամ խորամանկութիւնով՝ դաւեր գնելովը՝ որսի ճանապարհը մտիկ տալովը՝ դէս ու դէն ականջ անելովն ու սպասելովն, բանն իւր տեղը գայ, առնի, կամ իւր ձեռքի տակն եղած մի մարդ մի սխալ անի ու իւր ձեռքն ընկնի, կամ այդ մարդակերպ գաղանը ինքն այնպէս անի, որ իրանից կախումն ունեցող որեւիցէ՝ մարդ սխալուի, կամ եթէ իրա սորվեցրած մարդով սխալեցնել չկարողանայ, գոնէ միտաի, ու ինքն տէր գառնայ փողի, կայքի, որոնց համար հոգի էր տալի եւ ինչքան որ ձեռքը ձգեց, աչքը չկշտացաւ. ինչ եւս որ լինի ու որքան եւս լինի ձեռն ընկածն, չէ կարող կշտացնել աչքածակին, բան չտեսածին, միշտ աղքատին, որ Աստուծոյ կրակի տէրն է գարձել՝ միայն ծուռ ու մուռ ճանապարհներ բռնելով, միայն հոգին էրելով, առանց քրտինք թափելու: Այդպիսի մարդիկը զարմանալի հրէշներ են. դորանցից այնպիսիները կան—մինչեւ անգամ կրօնի քարոզիչների ու իրանց սուրբ ձեւացնող ու սրբութիւն, բարեպաշտութիւն ծախող աւանդապահների մէջն—որ կրօնի վերաբերած ամեն՝ սովորութիւնները մեծ ջերմեռանդութեամբ ու սրբութեամբ են կատարում, եւ որոնց շատ մարդ ճանաչումէ իսկապէս աստուածապաշտ մարդիկ, որոց նմանը դժուար թէ գտնուին, որ իրանց քրիստոնէական պարտքերն այնպէս կատարեն, ու իրանց հաւատն այնպէս պահեն: Ի՞նչ է պատճառն, որ այդ տեսակ մարդիկը, որ Աստուծոյ ատելի արարածներ են ու լաւ քրիստոնեայք են

Համարվում. պատճառն այն է, որ այնպէս ձեռքները տարածումեն, այնպէս խաչ հանում, երկրպագութիւն անում, աչքները վերեւ, կամ սեղանին ձգում՝ ժամումը, որ կկարծես թէ աշխարհքումն չեն, երկինքն են վերացել այն բոպէներումը ու Աստուծոյ հետ միացել. բայց շատ հեռու են արքայութիւնից. սուտ է, կեղծ է, կեղծաւորութիւն է, մարդախաբութիւն է՝ ու՛ իրանց խելքովն՝ կարելի է, որ Աստուածախաբութիւն եւս է, որովհետեւ այդ բոլոր իրանց խարդախ, անարժան վարմունքի մէջն — Աստուած՝ որ խաբել չեն կարող — մարդ են խաբում, որ տեսնողներն՝ իրենց անհոգի, անհաւատ մարդիկ չկարծեն, իրանց վերայ չգայթակղեն, ինչի որ իրանք իրանց շատ լաւ գիտեն, որ ո՛չ Աստուած ունին, ո՛չ հաւատ, ո՛չ երկիւղ. Աստուածանից, ո՛չ ամօթ մարգոյմէ. այսպիսի անամօթ եւ սոոր մարդիկը Հասարակաց օգուտի վերաբերած գործերի մէջն իրանց օգնութիւնն չեն խնայում, կամ առաքինի՝ բարեգործ մարդու նման՝ մի հասարակօգուտ շինուածք, Հաստատութիւն են անգամ ունենում ու պահպանում, որ աշխարհքումն անուն հանեն: Այսպիսի մարդիկ, որչափ որ աւելի միջոց ու յաջողութիւն ունին իրանց անարժանութիւնը ծածկելու, թագչնելու, իրանց սոոր մտքերն ու գիտաւորութիւնները յայտնի չանելու, աւելի լաւ կերպով մարդ խաբելու համար, աւելի մեծ անուն են հանում, աւելի բարձրացնում իրանց անունն՝ բայց՝ հեշտ խաբուող մարդոց առաջին:

Ամենեւին դժուար բան չէ մի այսպիսի մարդի համար, որ բարի բանն իրան գիմակ է արել ու այդ գիմակի տակը ծածկել է իւր հոգոյ վատութիւններն ու վնասակարութիւնները, — ամենեւին դժուար չէ, ասումեմ — որ այդպիսի մի մարդն հասնի վերջապէս իւր նպատակին, որ իւր համար բան ու գործ է արել ու հետեւումէ միշտ: Ամենեւին դժուար բան չէ այդպիսի մի մարդի համար, իւր խորամանկութիւնովն ու խարդախութիւնովն, որոյ մէջ եփուել, թափուել է, մեծին էլ՝ փոքրին էլ խաբել անիրաւ ճանապարհներով մեծ փողի տէր լինի: Նա ա հեշտ բան է այդպիսի մի անօրէն, անխիղճ, անամօթ, անպատիւ մարդի համար, որ մի արժանաւոր ու մաքուր անուն ունեցող մարդի անուն ստանայ, ու խաբուած ժողովուրդից շատերը մտքներից եւս անց չկացնեն, որ այդ անպիտանը պոռնիկ է ու աւելի վատ

մեղքի տէր է, անիրաւ բամբասող է, զրպարտող է, ուրիշի վերայ մուր քսող է, ուրիշի վատ օրի վերայ ուրախացող չարամիտ է, իւր մօտիկ բարեկամներին մատնող մի վատ, մի զզուելի հոգի է, մի խօզքով՝ Աստուծոյ ու մարդոց առեւթի մի չարագործ է։ Այսպիսի մարդն որ բարոյական մարդի հակապատկերն է բոլորովին, իւր արած յափշտակութիւններովն, որ անխիղճ ճանապարհներով հաւաքել զիգել է, իւր օրերը լաւ անցկացնելուց ու կեանքի ամենայն աններելի վայելչութիւններէն եւս կշտանալուց յետոյ, այդպիսի մարդն, ասումեմ, այնպէս է իրանցոյց տալիս ուրիշների աչքին՝ իւր մահուան միջոցին՝ որ հոգին հանգիստ կերպով է փչում, այնպէս՝ որպէս թէ ոչ մի վատ բան, ոչ մի մեղք բան չէ արել իւր կեանքումն, ոչ մի բան չկայ, որ իւր խղճմտանքի վերայ ծանրացած լինի ու իրան տանջի։ Անօրէն՝ անաստուած մարդի բոլոր կանգնած յաղթանակն այսքանն է ու այս է միայն ն։ Ամենայն մարդ, ինչ որ կցանի, այն կհնձի։ Նորա գին (յէշը) գերեզմանի մէջ փռումէ, ինչպէս որ ամեն մի մարդի մարմինն. բայց նորա հոգին, նորա հոգոյ դուրսիւնը, վիճակը ինչ կլինի։ Ի՞նչ գանձեր է նա հաւաքել արդեօք իւր անմահ հոգոյ համար, որ անմահութիւն ու երջանկութիւն վայելի անմահական կեանքի մէջն։ Պիտի նախանձեմ ես արդեօք այդպիսի մի թշուառականին, որ ոչինչ է հոգիների թագաւորութեանը մէջ, որոց մէջ մինն եւս ինքն պիտի լինէր ու յաւիտենական կեանք ու ուրախութիւն վայելէր։ Ասմ՝ որ նա իւր կարճ կեանքումն իւր արած չարութիւններովն կարողացաւ իւր վատ ցանկութիւնները կատարել իւր սրտի ուղեցածին չափ, մի՞թէ ես գորա համար կասկածանքի պիտի գնայի թէ՛ կայ արդեօք Աստուծոյ արդարութիւն։ Այ, Աստուծոյ անքննելի խորհուրդներն ընդունումեմ՝ հոգւով պաշտելով, թէեւ ինձ համար անհասկանալի եւս լինին։ Ի՞նչպէս կարող է պատիկ ու անխորձ երեխան, որին պէտքէ գեռ եւս բան սորվել ու փորձուել, մեր երկնաւոր Հօր իմաստուն տնօրէնութիւնները քննել, իմանալ։ Ինչի՞ պիտի սխալուիմ ու կասկածեմ թէ՛ կայ արդեօք Աստուծոյ արդարութիւն, ինչ է որ՝ ոտից մինչեւ գլուխը մեղքի մէջ կորած մարդը՝ ինչ աններելի միջոցներով՝ ջանքով ու հնարներով իւր ձեռք բերածն վայելումէ։ Եթէ Աստուծոյ պատուհասին չէ հանդիպում՝ նա իմ աչքիս առաջին—վայ նորա գլխին—հասել է, հա-

սել նորան իւր բաժինն՝ ունա իւր արժանաւոր պատիժը գտել է արդէն: Անաստուածն՝ իւր գառաստանն ինքն է անում: Նա իւր մէջն ամենայն լաւ բանն մեռցրել է. նա՝ յաւիտենական կեանքի համար ստեղծուած իւր հոգին անարժանացրել է, արժանաւորութիւնիցն քցել է: Իւր չար սովորութիւններիցը տաւրած, կուրացած, մեղքերի մէջ թաթախուած, նա կէս, կիսատ կեանք է անց կացնում. եւ երբ որ գոհ եւս է երեւում, միշտ ծանր քարի նման ծանրանում են նորա խղճմտանքի վերայ իւր արած անօրէնութիւններն, որ իւր համար անմուանալի անբժշկելի ցաւ են:

Այլ որ Աստուծոյ արգարութեանը դէմ մեղանշումէ, կարծելով թէ՝ ամենագէտ երկնաւոր թագաւորն ու արդար գառաւորն ամեն մի մարդի իւր գործքին համեմատ չէ տալի, կամ թէ Աստուծոյ կողմից հատուցումն չկայ՝ բան չկայ, ամեն մի մարդի իւր արածն իրան է մնում, մանաւանդ չար գործքի տէր մարդն, որ իբր թէ Աստուածանից չէ պատժւում ու կարծես թէ՝ վերին Տեսչութիւնն յաւիտենական կեանք չհաւատացողներին ու հաւատացողների վերայ ծիծաղողներին ու ծալ պակաս համարողներին որպէս եւ առաքինութեան ու առաքինի մարդին ծայր անողներին կարծես թէ ներողամիտ է ու այնպիսի պատիժներ չէ տալիս այս կեանքում, որ բոլոր աշխարհիս առաջին խայտառակութիւն, խեղճանան. չէ կոտորում մեղաւորի, չարագործի վիզը, որ բարերալտ ու արդար մարդիկն զարհուրին չար գործքիցն ու գործողներից — Աստուծոյ արգար գառաստան անելուն դէմ մեղանշողն ու կռակած ունեցողն, ասումեմ, թող լաւ իմանայ, որ քիչ մարդ կայ, որ մինչեւ իւր կեանքի վերջն ամեն իւր սրտի ուղածն անի, ամեն մեղք ու չարութիւն գործի ու՝ ուրախ անց կացնի իւր օրերն, հանգիստ, անխրոյժ, ապահով լիներով, որ, այնպէս սաքեւ է իւր գործն՝ ամեն իւր ունեցած խորամանկութիւններովն, խարդախութիւններով, անխիղճ եւ անամօթ հնարագիտութիւններովն, եւ այնպէս է յաջողեցրել ամեն բանն, որ այնուհետեւ մտածելու, հոգս անելու, վախենալու բան ամենեւին չունի. ընդհակառակն այդպիսի հրէշների սրտում ոչ հանգստութիւն կայ, ոչ ուրախութիւն տեսողական. միշտ ահ ու գոգի մէջ են, միշտ ականջները սրած, աչքը չորս արած, ամեն ժամանակ սպասում են, որ իրանց գլխին մի բան կգայ.

դորա շտապալա գիտեն, որ մի րոպէն յանկարծ ամեն բանը կ'փոխի, բայց կ'անի՝ ու իրան պատուաւոր, խելացի, կամ առաքինի, ազգասէր, մեծագործ ձեւացնող, իրան ծածկող, պինդ պինդ պահող կեղծաւոր չարագործին, իրեւ ամենաշտանգաւոր մարդ՝ զգուշի եւ ատելի կանի բոլոր երկրումը. աներես խաբէրային այնպէս գետնին կ'սփեն, որ էլ տեղիցը չվեր կենար, ուր մնաց թէ լաւ տնուն կարողանայ թողնել: Յաճուկ բան չկայ, որ չյայտնուի գաղտնի բան չկայ, որ չխմացուի, ասումէ ամենաաստուածային Փրկիչն, որոյ մարդութեան մէջն անգամ աստուածայինն ենք տեսնում ու պաշտում եւ պիտի պաշտէ մարդկութիւնը նաեւ այսուհետեւ եւ յաւիտեանս յաւիտենից: Նոյն Փրկիչն, որ իւր խօսքերի մասին ասումէ թէ՝ երկինքն ու երկիրս անց կ'կենան ու իւր խօսքերը չեն անց կ'ենար, նոյն Փրկիչն ասումէ թէ՝ անհաստատ աւազի վերայ է շինած չարը գործողի տունն. խաբւում է չարաչար, որ հիմնաւոր բան է կարծում, տեղողահանութիւն չունի. մի մրրիկը կ'կործանի:

Պարողանայի՛ր դու չար գործքի տէր մարդի խաւար սրտի մէջը մտնել ու աչքդ քցել տեսնել, թէ ինչ կայ այնտեղ, այն մարդի սրտի մէջն, որ բոլոր աշխարհիս առաջին ամենաբազմաւոր մարդն է ցոյց տալիս իրան, կամ քեզ երեւում: Արդեօք իւր բարձր դիրքն իւր ոսկիներն, ուրիշ թանկագին բաներն, պատուական ապրուստն՝ ճշմարիտ բազմաւորութիւն են նորա համար. այդպէս է ընդունում նա ու բազմաւոր ճանաչում է ինքն իրան, Հա՛, դու տեսնումես նորա փառաւոր, պսպղուն թագը, բայց չես տեսնում, չես իմանում այն ծանր հոգսերն, որ նա ունի եւ որ ծանր քարի պէս վրան ընկել են ու չեն թողում տակից դուրս գալ. չես իմանում, որ այդ հոգսերը նորա սրտումը բոյն են դրել, որդի պէս կրծում, ուտում են նորա կեանքը: Հա՛, քո աչքիդ երեւում են նորա լաւ լաւ շորերը, որ հագնումէ, զարդարւում. բայց քո աչքիդ չեն ընկնում, չես տեսնում, չես իմանում թէ՛ նորա վախկոտ խղճմտանքն ամեն մի փոքր բանի համար ինչպէս է տանջւում, չարչարւում: Անաստուած, չարագործ մարդի բոլոր կեանքն, որ քեզ նախանձելի է երեւում՝ իրեւ մի՛ ամենաբազմաւոր մարդի կեանք, լաւ խմցիր, որ անվերջ անհանգստութիւններ, մաշող հոգսեր, խղճմտանքի յանդիմանութիւններ են, ամենեւին չեն թողում նորան աչք

բայ անելո՛ր որ տեսնելո՛ւ միշտ չարչարումն նորան եւ երբէք չհե-
ռանում նորանից, որ շունչ քաշի ու խնայոյ, որ ապրումէ՛,
թող թէ իւր կեանքը մեծ փառքի մէջ եւ ամենաբաւ կերպով անց
կացնի: Միշտ նորա մտքից այս է անց կենում, ու սրտիցն ա՛խ է
քաշում ու առում թէ՛ երբ կ'իյնէր, ազատուէի քաշածներէիցս-
չեմ ուզում, առումէ ինքն իրան, ո՛չ այս փառքն, ո՛չ փողը, ո՛չ
վայելչութիւնը, ո՛չ իշխանութիւնն, որ հոգիս էրելո՛ւ, խղճմտան-
քըս միշտ սեւացնելով ու մեռցնելով, ձեռք բերի՛ երանի՛ յետին
աղքատն, ամենաՀասարակ, աննշան մարդն լինէի: այսպէս նո-
րա միջում անդադար կախ կայ, ինքն իւր հեա կռուի մէջ է
միշտ, ինքն իւր թշնամի է կարծես՝ ու հաշտուելու հնարը, ճա-
րը չէ գտնում: Իւր ամենաուրախ միջոցին մին էլ յանկարծ
միտքն է ընկնում իւր արած այս՝ այն սարսափելի գործն, որ
կարծումէր թէ մոռացել, գնացել է վաղձուց: Մի խարուիր նորա
կեղծ, ահամոյ ծիծաղը երեսը ինքն իրան քեզ ջոյց տալուց, սուտ
է, ինչ որ երեւցնումէ գրսից, ներսինը, սրտինը՝ իրան է այրում,
գրսինը՝ երեսինը՝ վրայից զոյց առածն՝ ուրիշին, մի խարուիլ
նորա արած կատակներիցն, որով քեզ սուտ հաւատացնել է ու-
զում թէ՛ սիրան ուրախ է: Տեսնէիր նորան միայնակ եղած ժա-
մանակն թէ՛ ինչպէս փոխվումէ կերպարանքն, ամենեւին քո
տեսածը չէ՛, ու նորա երեսին՝ ծիծաղի տեղը գրուած է անփա-
րատելի տխրութիւն, ինքն իրան ամենեւին չհաւանելու կերպ,
հոգսերից չխմանում՝ ինչ անի, ո՛ր փախչի՛ շատ անգամ նորա
ամեն մի շարժումածքի մէջ յետին յուսահատութիւն է տեսնվում:
Տեսնէիր դու նորան, երբ որ մահչա՛ իւր մեռնելը նորա միտքն է
գալիս, հսկայական ոյժ ունեցող մի հրէշ, կարծես, գալիս է նո-
րա առաջը կանգնում, ահ ու դող ձգում նորա բոյր մարմնի
մէջ, մահն աչքովն է կարծես տեսնում: Բայց ինչ մահ, այն
մահն, որ նորան խօսքով ասելու նման՝ միտք է անել տալիս թէ՛
որքան էլ որ անաստուած, ամեն սուրբ բան մոռացած, ուրա-
ցած ես, կարծելով թէ՛ մեռնելուց յետոյ ամեն բան պրծաւ,
արածներդ քեզ մնաց, միայն ափոստ՝ որ երկար չքաշեց քո լաւ
օրեր տեսնելդ, չէ՛, այնպէս չէ՛, չարաչար սխալվումես, առումէ
իրան իւր խղճն, այժմ է՛ մահուանից յետոյ է, որ յաւիտեան
պէտք է ուրիշ, անցաւոր աշխարհի կեանքի պէս կարճ կեանք
չլիտի ունենաս, չէ՛՝ այլ եւս վերջ պիտի չունենայ քո կեանքդ:

միշտ եւ անմերժ պէտք է արբիս: միշտ անմերժ քո գործերիդ փոխարէնը, քո հատուցումնդ ստանալու համար պիտի ատրիս: որ քո չար գործերիդ համար անմերժ տանջուելուդ քո խղճիդդ պատժուած լինիս այն արդար Նստաւորից, որ ատուելից վերեն է բնակւում եւ որ քո աչքիդ առաջին բայ ու յայտնի է անում քո ամեն արարմունքներդ. տեսնէիր նորան, ինչպէս անօգնական, անցոյս մնացած, ազատուելու հնար ու ճանապարհ է պոռում: հասէք ինձ, օգնեցէք է գոչում ու սկսումէ աղքատներին առատ ողորմութիւններ անելու. պատեր, ծովեր պահելու ինքն իւր վերայ սաստիկ օպաշխարանքներ գնելու ու քաշելու, ժամի գուռ մաշելու, Աստուծոյ ու սուրբերի երեսը վեր բերելու իւր ազօթքներովն, որ ողորմութիւն գտնի, ահեղ դատաստանից ազատուի: Այսպիսի թշուառականներն այնքան ցածացած, այնքան կորցրած են մարգկային արժանաւորութիւնն ու այնքան օտարացած են երկնաւոր Տեսչութիւնից, որ կարծումեն թէ՛ ահ ու գողով իրանց բերանից դուրս տուած աղաչանքի՝ պաղատանքի խօսքերովն բանն այնպէս կրեւեն, որ Աստուծոյ կիսաբեն, կիաշառեն, իրանց հետ կհաշտեցնեն, նորա բարկութիւնից ու պատժից կազատուին: Իրանց այս արարմունքներովն այն են միայն ցոյց տալիս, որ Աստուծուն չեն ճանաչում. մի ահագին փոս բաժանումէ ու հեռու պահում նորանց Աստուածանից: Եթէ որ իրանց մեռնելու միջոցին քահանայի ձեռքից հաղորդութիւն էլ են ընդունում (ճաշակւումեն) ո՞վ է իմանում թէ՛ այն միջոցին նորանց սրտի միջումն ինչ կըրակներ են վառւում, ինչ այրուել են այրւում, փթոթւում ու հօլովթիւն չգտնում: Հոգւով ու մարմնով կորած այգպիսի մի չարագործիցն երեսներս շուռ ենք տալիս գէն՝ սարսափելով ու աղօթումենք. Աստուած քաւի այդ մեղաւորին:

Այս է չարագործի յաղթանակն. այս է մեղաւորի անպատիժ մնալն. պէտք է ու կարժի՞, որ ես նորան նախանձեմ, կամ կասկածեմ, որ Աստուծոյ արդարութիւն կայ, ու նորա դատաստանն արդար է:—Ո՛չ՝ ո՛չ. մարմնով ցանողը՝ մարմնով կըհնձի, հոգով ցանողը՝ հոգով: Ինձ պիտի չզարմացնեն այլ եւս անաստուած մարդի այս աշխարհումս արած յաղթութիւններն, կանգնած յաղթանակներն, ունեցած յաջողութիւնն. վայ նորա գլխին. այն յաղթութիւններն, որ իրան յաղթութիւններ են

երեւում՝ որպէս եւ իւր ունեցած բոլոր յաջողութիւններն իւր չար գործերի մէջը, նորա սրտին անպղտոր ուրախութիւն, հանգստութիւն, երջանկութիւն ամենեւին չեն բերում, ինչպէս որ առաքինութեան մի ծածուկ յաղթութիւնն է բերում: Երկնքի խաղաղութիւնն այգպիսի՝ մեղքերով լցուած, պղտորուած սրտի մէջ երբէք չէ իջնում, չէ բնակում:

Եւ իմ կեանքիս հանդարտ ընթացքն յառաջ կտանեմ, Աստուած կսիրեմ ու ինձ նման մարդին մեղք չեմ անիլ, նորա առաջը պարտական չեմ մնալ. մնացածը բոլորն արգար Քատաւորին կ'յանձնեմ: Կգայ օրն, որ այս աշխարհիս կեանքի վերայ պատած թուխ թուխ ամպերը կցրուին, մեր կեանքի երկինքը կպարզի, մութից գուրս կգանք լոյս, պայծառ լոյս կտեսնենք, էլ մեզ համար մութ բան չմնալ: Այն ժամանակն բերկրութիւնով կասենք ինքներս մեզ թէ՝ Աստուծոյ մեզ արածը մեզ համար որչափ լաւ էր, բայց չարերն իրանք իրանց կորա՞ն:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՅԱՐԴԵՒԻ ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ

ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՔ *).

Շնորհակալ եմ Ձեզանից, որ՝ ատենապետ ընտրելով՝ պատուեցիք ինձ, — Սովորութիւն է, որ ատենապետը պաշտօնավարութեան մէջ մտնելու սկզբին՝ մի քանի խօսքով դառնայ իւր ընտրողներին և խոստովանուի, թէ ի՞նչպէս է ուղում արդարացնել նոցա հաւատարմութիւնը առ ինքը: Ես մեր արժանեաց ստորութիւն պիտի համարեմ, եթէ, ոմանց առաջուայ մի քանի ակնարկութեանց համեմատ, ուղենայի ժամավաճառ լինել և հաշիւ տալ՝ թէ արդեօք բռնութիւն պէտք է գործ դնեմ իմ ստանձնած պաշտօնիս մէջ, թէ ոչ. կամ թէ ի՞նչ արտաքին ձևեր պէտք է պահպանեմ նոյն միջոցին, ես աւելի կարեւոր եմ դատում մի

(*) Այս ատենախօսութիւնը խօսուեցաւ առաջին Ընդհանուր Հայոց Ուսուցչական Ժողովի մէջ, Թիֆլիսում, անցեալ Օգոստոսի 23-ին: Խօսելու՝ միջոցին Պ. Նախագահից մի քանի անգամ ազդարարութիւն ստանալով խօսքիս երկարութեան մասին՝ ես հարկադրութեամբ ասելիքս տեղ տեղ համառօտել, թէ եւ ունկնդիրները վիհանձն բարեօրոտութեամբ ուղեցին ամբողջութեամբ լուրջ նոյնը: Իսկ այժմ տպագրուեմ լինելով ինչ ընդհանրապէս՝ Նոքա կը նկատեն, որ բավանդակութեան էական մասերը ատենախօսութեանս միջոցին արդէն հողորդել եմ. դուրս էի ձգել խօսքիս մի քանի այնպիսի ակնյայտի ամփոփումները, որոնց եղբակցներն դժուար չը պէտք է լինէր ունկնդիրների համար: Ս. Ա.